Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը » ֆիլմը «Հայարտուն » կենտրոնում

2017 թվականի ապրիլի 30-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացավ «Պոետի վերադարձը» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմի ռեժիսոր, «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը վաղուց էր սպասում Թբիլիսիում այս ֆիլմի ցուցադրությանը և կինոյի թբիլիսահայ երկրպագուների հետ հանդիպմանը: Սակայն տկարության պատճառով ֆիլմի բեմադրող-ռեժիսորը չկարողացավ Թբիլիսի ժամանել և ներկա գտնվել «Ջիվանուն և Ջավախքին» նվիրված ֆիլմի ցուցադրությանը:

Հավարտ կիրակնօրյա Սուրբ և Անմահ Պատարագի Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու բակում հավաքվածներին բաժանվեց Հարություն Խաչատրյանի երբեմնի սուրբ խոստումը՝ Հավլաբարի Սուրբ էջմիածին եկեղեցու հավատացյալներին հյուրասիրել խոստացած մատաղով:

Այնուհետև հանրությունը տեղափոխվեց Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահ, որտեղ թեմի մշակույթի բաժնի տնօրեն Լևոն Չիդիլյանը

1 / 3



Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը » ֆիլմը «Հայարտուն » կենտրոնում

հանգամանալից խոսեց Հարություն Խաչատրյան հայտնի ռեժիսորի, բազում վավերագրական ֆիլմերի հեղինակի մասին, արժևորեց նրա ավանդը «Ոսկե ծիրան» փառատոնի՝ հիրավի միջազգային մեծ ճանաչում վայելող այս փառատոնի հիմնադրման, իսկ այնուհետև կազմակերպման գործում:

ՀՀ ժողովրդական արտիստ Հարություն Խաչատրյանի համար կյանքի հավատո հանգանակը եղել և մնում է՝ լայն բացված աչքերով ապրելու և ամեն ինչ տեսնելու, ցույց տալու և կինոյի միջոցով հնարավորինս մարդուն օգնելու սեփական ուղին գտնելու գաղափարը:

Եվրոպական կինոակադեմիայի անդամ Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը» ֆիլմը նվիրված է 19-20-րդ դարերի հայկական մշակույթի ամենավառ անհատականություններից մեկին՝ Ջիվանուն և Ջավախք աշխարհին: Ախալքալաքի ծնունդ ռեժիսորը Ջիվանու աչքերով և քննող հայացքով պատմում է մերօրյա Հայաստանի մասին,: Ֆիլմը ժամանակակից կյանքի դոկումենտալ ուսումնասիրություն է և փաստագրում է Ջիվանու արձանի կերտումը և տեղափոխումը Երևանից Ջիվանու ծննդավայր՝ Ջավախք, ինչպես նաև ներկայացնում է նկարահանող խմբի ստացած տպավորությունները Ջավախք տանող ճանապարհին:

Թբիլիսահայերը հետաքրքրությամբ դիտեցին ռեժիսորի «Պոետի վերադարձը» ֆիլմը, որը նվիրված է նաև Ջավախքի ավանդույթներին:

2 / 3



Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը» ֆիլմը «Հայարտուն» կենտրոնում

3 / 3